

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### 1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյան

### 2. Գործուղման վայրը և ժամկետները

Իսրայելի Պետություն (ք. Երուսաղեմ)  
2026 թվականի փետրվարի 2-3-ը:

### 3. Հրավիրող կողմը

Իսրայելի Պետության կրթության նախարար Յոավ Կիշի հրավեր:

### 4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն 2026 թվականի փետրվարի 2-ից 4-ը Երուսաղեմում կայանալիք «Արհեստական բանականության միջոցով անհատականացված ուսուցում» թեմայով կրթության ոլորտի նախարարական համաժողովին:

### 5. Քննարկված թեմաները

Այցի ընթացքում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է Իսրայելի Պետության կրթության նախարար Յոավ Կիշի, ինչպես նաև Մշակույթի և սպորտի նախարար Միկի Զոհարիի հետ: Հանդիպմանը մասնակցել են նաև Իսրայելում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արման Հակոբյանը և ՀՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական Արման Անդրիկյանը:

Կողմերը քննարկել են ուսումնական ծրագրերի մշակման, ուսուցիչների վերապատրաստման, STEM կրթության, թվային գրագիտության և նորարարական դասավանդման մեթոդների ոլորտներում համագործակցության հնարավորությունները: Անդրադարձ է կատարվել նաև տեխնոլոգիական և մասնագիտական կրթության զարգացմանը, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, ինժեներական մասնագիտությունների և թվային հմտությունների ուղղություններով համատեղ ծրագրերի նախաձեռնմանը, ինչպես նաև մասնագետների փոխանակմանը վերաբերող հարցերին:

Նախարարները քննարկել են մշակույթի և սպորտի ոլորտներում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

## **6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը Իսրայելի Պետության կատարած գործուղման ընթացքում մասնակցել է «EducAltion 2026» նախարարական համաժողովին, որը նվիրված է արհեստական բանականության դարաշրջանում անհատականացված կրթության քաղաքականության մշակմանը:

Նախարարը հանդես է եկել ելույթով՝ ընդգծելով, որ արհեստական բանականությունը ոչ միայն փոխում է կրթության մոտեցումները, այլև դառնում է գիտության, տնտեսության և նորարարության զարգացման առանցքային գործոնը: Նրա խոսքով՝ Հայաստանն ակտիվորեն հետևում է կրթության համակարգում ԱԲ գործիքների ընդգրկման գլոբալ գործընթացին՝ այս ուղղությամբ զարգացնելով նաև սեփական փորձը:

Ժաննա Անդրեասյանը նշել է, որ Հայաստանն այն քիչ երկրներից է, որտեղ դպրոցներում արդեն ներդրված են ԱԲ դասընթացների փորձնական ծրագրեր: Նա առանձնացրել է ավագ դպրոցներում ԱԲ սերունդ կրթական ծրագիրը, STEP.AI-ը, ինչպես նաև «AI Generation» բազմաստիճան կրթական նախաձեռնությունը, որն ուղղված է ԱԲ ոլորտում մասնագետների պատրաստմանը՝ դպրոցից մինչև հետբուհական կրթություն:

«Այս նախաձեռնություններն արդեն ընդգրկում են Հայաստանի բոլոր մարզերի տասնյակ դպրոցներ. ծրագրում ներառված են հարյուրավոր ուսուցիչներ և ավելի քան 600 աշակերտներ: Տարիների ընթացքում ծրագրերի մասնակիցները ոչ միայն ամրապնդել են իրենց մաթեմատիկական և ծրագրավորման հմտությունները, այլև ձեռք են բերել ԱԲ գրագիտություն, քննադատական մտածողություն, թիմային աշխատանք և նորարար խնդիրների լուծման կարողություններ: Ներկայում ծրագրերը դեռևս փորձնական են, որոնք իրականացվում են պետության և առաջատար SS կազմակերպությունների սերտ համագործակցությամբ, ինչը վկայում է փոխադարձ վստահության մասին՝ ապահովելով սովորողներին վաղ փուլում ԱԲ գործիքներին ծանոթացնելու հանձնառությունը», - նշել է Ժաննա Անդրեասյանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի խոսքով՝ Հայաստանի համալսարանների կրթական ծրագրերն ուղղված են խորքային գիտելիքների տրամադրմանը արհեստական բանականության հետ առնչվող ոլորտներում:

Ելույթի ընթացքում անդրադարձ է կատարվել նաև միջազգային տեխնոլոգիական միջոցառումներին, մասնավորապես՝ WCIT 2024-ին, որը երկրորդ անգամ անցկացվել է Հայաստանում՝ նպաստելով երկրի՝ որպես տեխնոլոգիական առաջատարի դիրքավորմանը:

Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է նաև ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի գործունեությունը՝ գեներատիվ արհեստական բանականության կրթական ծրագրի գործարկման ուղղությամբ՝ նշելով, որ այն

կնպաստի երիտասարդների շրջանում համապարփակ ԱԲ գրագիտության ձևավորմանը:

«Հայաստանում այս նախաձեռնությունները պարզապես կրթական բարեփոխումներ չեն. դրանք մեր կրթական համակարգի հիմնասյուներն են: Աշխարհաքաղաքական իրողությունները և բնական ռեսուրսների սահմանափակությունը մեզ ստիպում են առավելագույնս օգտագործել անսահման ռեսուրսը՝ մարդկային միտքը: ԱԲ-ն մեզ համար հավասար հնարավորությունների բանալին է, որը թույլ է տալիս դուրս գալ ավանդական տնտեսությունների սահմաններից: Մենք համոզված ենք, որ ԱԲ-ի նոր սերունդը կվերափոխի տնտեսությունը և կնպաստի ՀՀ-ում թվային վերափոխման քաղաքականությունների արդյունավետ իրականացմանը: Մեր պարտքն է պատրաստել սովորողներին ոչ միայն այսօրվա պահանջներին, այլև վաղվա հմտություններին՝ ապահովելով, որ նրանք լինեն փոփոխությունների ստեղծողներ, ոչ թե պարզապես հետևողներ», - ասել է Ժաննա Անդրեասյանը:

Եզրափակելով խոսքը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարն ընդգծել է, որ մինչև տասնամյակի ավարտը Հայաստանի դպրոցների ավելի քան 80 տոկոսում նախատեսվում է ներդնել ԱԲ կրթական մոդուլներ, իսկ կրթական համակարգի շրջանավարտները պետք է դառնան ոչ թե արհեստական բանականության սպառողներ, այլ դրա ստեղծողներ:

Այցի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարը հանդիպել է Իսրայելի կրթության նախարար Յոավ Կիշի հետ: Հանդիպմանը մասնակցել են նաև Իսրայելում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արման Հակոբյանը և ՀՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական Արման Անդրիկյանը:

Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության և «Կրթություն 2026» նախարարական համաժողովին մասնակցելու հրավերի համար՝ ընդգծելով, որ Հայաստանը մեծ կարևորություն է տալիս Իսրայելի հետ կրթության ոլորտում համագործակցության խորացմանը: Նրա խոսքով՝ երկու երկրների միջև առկա են փոխլրացնող ներուժ և համագործակցության լայն հնարավորություններ՝ հատկապես նորարարական և տեխնոլոգիական կրթության ուղղություններով:

Հանդիպման ընթացքում Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է Հայաստանում իրականացվող կրթական բարեփոխումները, մասնավորապես՝ արհեստական բանականության ուսուցման ներդրումն ավագ դպրոցներում: Նա տեղեկացրել է՝ 2023 թվականից Հայաստանում մեկնարկել է «ԱԲ ՍԵՐՈՒՆԴ» կրթական բազմամակարդակ ծրագիրը, որի նպատակն է ստեղծել արհեստական բանականության գիտնականի և նորարարի կրթական ուղի՝ սկսած ավագ դպրոցից մինչև հետբուհական մակարդակ: Կրթական համակարգում որպես ԱԲ ինտեգրման հաջողված օրինակ՝ Ժաննա Անդրեասյանը նշել է նաև «STEP.ai» գիտության տեխնոլոգիայի կրթական ծրագիրը, որը մեկնարկել է 2022 թ. մասնավոր հատվածի անմիջական նախաձեռնությամբ և 2024 թ. սկսած պետության անմիջական ներգրավմամբ ընդլայնել է շրջանակը՝

ներառելով ՀՀ հանրակրթական և միջին մասնագիտական կրթական հաստատություններ:

Կողմերը քննարկել են ուսումնական ծրագրերի մշակման, ուսուցիչների վերապատրաստման, STEM կրթության, թվային գրագիտության և նորարարական դասավանդման մեթոդների ոլորտներում համագործակցության հնարավորությունները: Անդրադարձ է կատարվել նաև տեխնոլոգիական և մասնագիտական կրթության զարգացմանը, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, ինժեներական մասնագիտությունների և թվային հմտությունների ուղղություններով համատեղ ծրագրերի նախաձեռնմանը, ինչպես նաև մասնագետների փոխանակմանը վերաբերող հարցերին:

Ժաննա Անդրեասյանը նշել է, որ տեխնոլոգիական կրթությունը դառնում է Հայաստանի այցեքարտերից մեկը՝ ընդգծելով երկրի առաջավոր փորձը ոչ ֆորմալ կրթության ոլորտում և ներկայացնելով Թումո կենտրոնի գործունեության մոդելը:

Զրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել նաև գիտահետազոտական համագործակցությանը, ակադեմիական փոխանակման ծրագրերին, միջբուհական կապերի զարգացմանը, ինչպես նաև ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին: Այս համատեքստում Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքը և ակադեմիական քաղաքի նախագիծը՝ ընդգծելով, որ բարեփոխումներով մեծ տեղ է տրվում նաև ոլորտի միջազգայնացմանն ու օտարերկրյա գործընկերների ներգրավմանը:

Այցի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպել է նաև Իսրայելի մշակույթի և սպորտի նախարար Միկի Զոհարիին:

Նախարարները քննարկել են մշակույթի և սպորտի ոլորտներում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

## **7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Ընդունվել է «Անհատականացված ուսուցման Երուսաղեմի հոչակագրի» համատեղ հայտարարությունը, որը կոչ է անում գործողություններ ձեռնարկել կրթության մեջ արհեստական բանականության ոլորտում միջազգային համագործակցությունը խթանելու համար:

## **8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Հանդիպումների արդյունքում կողմերը վերահաստատել են իրենց պատրաստակամությունը խորացնելու կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում երկկողմ, երկարաժամկետ համագործակցությունը:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

**Պատվիրակության կազմում՝**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական Արման Անդրիկյան

**Պատվիրակության ղեկավար՝**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և  
սպորտի նախարար

**Ժաննա Անդրեասյան**

X

---

**06.02.2026թ.**